ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ԱՊԱՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ԼՐԱՏՎԱՄԻՋՈՑՆԵՐՈՒՄ

ԱՄՓՈՓԻՉ ԶԵԿՈՒՅՑ

Մշտադիտարկումն իրականացվել է ՕքսԵՁեն հիմնադրամի կողմից «Արտեմիս» դաշինք ծրագրի կողմից ֆինանսավորվող «Պայքար գենդերային ապատեղեկատվության դեմ. վերափոխելով պատմությը 2.0» ծրագրի շրջանակում:

Զեկույցը հեղինակել են.
Անի Կոջոյան, գենդերային փորձագետ
Լիլիթ Հովհաննիսյան, մեդիամշտադիտարկման փորձագետ

Մշտադիտարկման մասնագետներ.
Գոհար Գրիգորյան, Տաթևիկ Արշակյան, Սեդա Առաքելյան

Վերջին խմբագրությունը՝ 31.03.2025

Երևան
2024

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն.....3

Մեթոդաբանություն..... 3

Ի՞նչ է գենդերային ապատեղեկատվությունը.....7

Նարատիվ և դիսկուրս.....8

ՄԱՍ 1
Մշտադիտարկման արդյունքներ. մեդիան և գենդերային ապատեղեկատվությունը ՀՀ-ում.....10

ՄԱՍ 2
Մշտադիտարկման արդյունքներ. գենդերային ապատեղեկատվության թեմատիկ դասակարգում. գենդերային դիսկուրսներ և նարատիվներ.....13

ՄԱՍ 3
Մշտադիտարկման արդյունքներ. օրինակների ուսումնասիրություն և վերլուծություն.....19

Եզրակացություն.....24

Առաջարկություններ.....27

Գրականության ցանկ.....30

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

2024 թվականի փետրվար-հուլիս ամիսներին իրականացվել է մշտադիտարկում՝ նպատակ ունենալով բացահայտել հայաստանյան լրատվամիջոցներում գենդերային ապատեղեկատվության տարածվածությունը, պարզել՝ որոնք են առավել հաճախ տարածվող գենդերային ապատեղեկատվության դիսկուրսները, ինչ թեմաների համատեքստում են դրանք տարածվում: Սույն մշտադիտարկման արդյունքները նաև ցույց են տալիս, թե ովքեր են առավել հաճախ տարածում գենդերային ապատեղեկատվությունը, օրինակ՝ լրագրողը/հաղորդման հեղինակը, հաղորդման հյուրը/ռեպորտաժի «հերոսը»: Վերլուծությունը կենտրոնանում է նաև մշտադիտարկման ենթարկված հայաստանյան լրատվամիջոցներում գենդերային ապատեղեկատվություն տարածողների սեռային համամասնության վրա:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Ծրագրի սկզբնական փուլում իրականացվել է երկամսյա փորձնական մշտադիտարկում, որի հիման վրա մեթոդաբանությունը վերջնականացվել է՝ հիմնական ուսումնասիրությունը կատարելու նպատակով: Մշտադիտարկման առարկա են եղել հայաստանյան 16 լրատվամիջոցների հիմնական լրատվական թողարկումները, բանավիճային, հարցազրույցի ձևաչափով հաղորդումները և տեքստային հրապարակումները, այդ թվում՝ հոդված, սյունակ, խմբագրական, հարցազրույց:

Փորձնական մշտադիտարկման ընթացքում 16 լրատվամիջոցներից չորսում ապատեղեկատվության հոսք չի նկատվել (թեև գենդերային կարծրատիպեր շրջանառվել են, դրա մասին՝ ստորև): Արդյունքում որոշում է կայացվել նվազեցնել մշտադիտարկվող լրատվամիջոցների թիվը և կենտրոնանալ նրանց վրա, որոնց համատեքստում գենդերային ապատեղեկատվություն դիտարկվել էր՝ ռեսուրսների օգտագործումը օպտիմալացնելու համար:

Այսպիսով՝ մշտադիտարկվող լրատվամիջոցների ցանկից հանվել են Հանրային հեռուստաընկերությունը, Հանրային ռադիոն, 5-րդ ալիքը և 24news.am-ը:

Մշտադիտարկման համար ընտրվել է **12 լրատվամիջոց**: Այդ լրատվամիջոցներն են՝

1. **«Արմենիա» հեռուստաընկերություն**

2. «Շանթ» հեռուստաընկերություն
3. «Առավոտ» (aravot.am)
4. «Հրապարակ» (hraparak.am)
5. «Ժողովուրդ» (Armlur.am)
6. «1in.am»
7. «Factor.am»
8. «Civic.am»
9. «Armtimes.com»
10. «168.am»
11. «Iravunk.com»
12. «News.am»

Լրատվամիջոցների ընտրությունը կատարվել է հետևյալ սկզբունքների հիման վրա՝ նպատակ ունենալով անդրադառնալ ԶԼՄ-ների հնարավորինս ամբողջական շրջանակին, ներառել և՛ տեսալսողական, և՛ տեքստային բովանդակություն՝ ապահովելու մեդիայի բազմազան շրջանակ:

Լրատվամիջոցների ընտրությունը պայմանավորված է նաև Հայաստանի հասարակական-քաղաքական դաշտում դրանց դիրքավորմամբ, բովանդակության տարածման ձևաչափերի բազմազանությամբ և հանրային կարծիքի վրա ունեցած ազդեցությամբ:

Մշտադիտարկման ընթացքում լրատվամիջոցները բաժանվել են երեք խմբի՝ իշխանություններին առավել հաճախ թիրախավորող, ընդդիմությանն առավել հաճախ թիրախավորող և համեմատաբար չեզոք: Այս մոտեցումը թույլ է տալիս վերլուծությանը որոշել, թե գենդերային ապատեղեկատվությունը լրատվամիջոցների որ տեսակներում ինչքան է տարածված:

Մշտադիտարկման ընթացքում չափումներն իրականացվել են *միավորներով:* Դրանք են տեքստային նյութերը՝ հոդվածներ, հարցազրույցներ, խմբագրականներ, և հեռուստանյութերը՝ լրատվական թողարկման առանձին սյուժեները (ռեպորտաժ և այլն), բանավիճային ամբողջական հաղորդումները:

Արձանագրվել են. ա) մշտադիտարկված նյութերի ընդհանուր քանակը, բ) այդ ընդհանուր քանակից գենդերային ապատեղեկատվություն պարունակող հրապարակումների թիվը: Վերջին խմբի հրապարակումների բովանդակությունը

վերլուծվել է առավել մանրամասն. գենդերային ինչ ապատեղեկատվություն է տարածվում, ինչ թեմայի համատեքստում է տարածվում, ով է տարածում։

Մշտադիտարկված լրատվամիջոցներում գենդերային ապատեղեկատվությունը տարածողների գենդերային համամասնությունը հասկանալու համար դիտարկվել է նշված հրապարակումների՝ տեքստային նյութերում և հեռուստանյութերում գենդերային ապատեղեկատվության աղբյուրի պատկանելությունը։

Մշտադիտարկման առարկա լրատվամիջոցները.

1. **«Շանթ» հեռուստաընկերություն**

Մշտադիտարկման առարկա հրապարակումներ՝

1. Հորիզոն
2. Հեռանկար
3. Հարցազրույց
4. Հեռանկար բանավեճ

2. **«Արմենիա» հեռուստաընկերություն**

Մշտադիտարկման առարկա հրապարակումներ՝

1. «Ժամը» լրատվական

3. **«Առավոտ» (aravot.am)**

Մշտադիտարկման առարկա հրապարակումներ՝

- հասարակական-քաղաքական բաժնի տեքստային նյութեր՝ հոդվածներ, հարցազրույցներ և տեսանյութեր։

4. **«Հրապարակ» (hraparak.am)**

Մշտադիտարկման առարկա հրապարակումներ՝

- հասարակական-քաղաքական բաժնի տեքստային նյութեր՝ հոդվածներ, հարցազրույցներ և տեսանյութեր։

5. **«Ժողովուրդ» (Armlur.am)**

Մշտադիտարկման առարկա հրապարակումներ՝

- հասարակական-քաղաքական բաժնի տեքստային նյութեր՝ հոդվածներ, հարցազրույցներ, տեսանյութեր։

6. **«1in.am»**

Մշտադիտարկման առարկա հրապարակումներ՝

- հասարակական-քաղաքական բաժնի տեքստային նյութեր՝ հոդվածներ, հարցազրույցներ,
- հասարակական-քաղաքական բաժնի տեսանյութեր՝ հարցազրույցներ,
- լրատվական-վերլուծական թողարկում։

7. **«Factor.am»**

Մշտադիտարկման առարկա հրապարակումներ՝

- հասարակական-քաղաքական բաժնի տեքստային նյութեր՝ հոդվածներ, հարցազրույցներ,
- հասարակական-քաղաքական բաժնի տեսանյութեր՝ հարցազրույցներ, քննարկումներ, բանավեճեր։

8. **«Civic.am»**

Մշտադիտարկման առարկա հրապարակումներ՝

- հասարակական-քաղաքական բաժնի տեքստային նյութեր՝ հոդվածներ, հարցազրույցներ,
- հասարակական-քաղաքական բաժնի տեսանյութեր։

9. **«Armtimes.com»**

Մշտադիտարկման առարկա հրապարակումներ՝

- հասարակական-քաղաքական բաժնի տեքստային նյութեր՝ հոդվածներ, հարցազրույցներ,
- հասարակական-քաղաքական բաժնի տեսանյութեր։

10. «168.am»

Մշտադիտարկման առարկա հրապարակումներ՝

- հասարակական-քաղաքական բաժնի տեքստային նյութեր՝ հոդվածներ, հարցազրույցներ,
- հասարակական-քաղաքական բաժնի տեսանյութեր,
- «Օրախնդիր»,
- «Երկու ճակատ»։

11. «Iravunk.com»

Մշտադիտարկման առարկա հրապարակումներ՝

- հասարակական-քաղաքական բաժնի տեքստային նյութեր՝ հոդվածներ, հարցազրույցներ,
- հասարակական-քաղաքական բաժնի տեսանյութեր։

12. «News.am»

Մշտադիտարկման առարկա հրապարակումներ՝

- հասարակական-քաղաքական բաժնի տեքստային նյութեր՝ հոդվածներ, հարցազրույցներ,
- հասարակական-քաղաքական բաժնի տեսանյութեր։

Ի՞ՆՉ Է ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ԱՊԱՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

Գենդերային ապատեղեկատվությունը «տեղեկատվության» տեսակ է, որը ենթադրում է անձի սեռի հետ կապված կեղծ, ապակողմնորոշող կամ մտաշահարկող տեղեկության կանխամտածված ստեղծում և տարածում[1]: Այսինքն, այն կեղծ և ապակողմնորոշող բովանդակություն է, որը տարածվում է միտումնավոր մոլորեցնելու մտադրությամբ և անձին կամ անձանց վնաս հասցնելու նպատակով՝ կենտրոնում պահելով անձի սեռն ու գենդերը:

Այն ոչ թե զուտ սխալ տեղեկության տարածում է կամ չափազանցված տեղեկություն, որը ստուգված չէ, այլ միտումնավոր է կատարվում[2]: Հատկապես համացանցի միջոցով ապատեղեկատվության տարածումը կարող է դառնալ կայծակնային, ակնթարթային և անկառավարելի: Նման «տեղեկատվությունը» նպատակ ունի կասկածի տակ դնել անձի բարոյական հատկանիշները, կնոջ կարողությունները, սեռականությունը, հոգեկան առողջությունը և նսեմացնել կնոջ արժանապատվությունը:

Նման ապատեղեկտվությունն օգտագործվում է միտումնավոր վտանգավոր կարծրատիպերն ամրապնդելու համար և այդ կարծրատիպերը որպես գործիք օգտագործելու համար, դիմացինին վնասելու, լռեցնելու և չեզոքացնելու համար: Այն տարբեր ուղիներով և սոցիալական ինստուտներով է կիրառվում, հատկապես՝ մեդիայի միջոցով:

---

[1] Kovacs, A. (2021). *Gendered Disinformation: 4 Ways Misinformation and Falsehoods Target Women Online*. Available at https://chayn.co/resources/gendered-disinformation [Access: 05.09.2024]. https://assets.publishing.service.gov.uk/media/5e4ab31e40f0b677c3e37ff3/Quick_Read-Gender_and_countering_disinformation.pdf ; https://il.boell.org/en/2022/01/26/what-gendered-disinformation ; https://www.disinfo.eu/publications/monitoring-disinformation-around-elections-key-takeaways-from-the-german-federal-elections-in-2021-2/ ; https://www.ohchr.org/sites/default/files/documents/issues/expression/cfis/threats-digital-age/csos/2023-01-26/Submission-SR%20freedex-hrc50-Demos.pdf ; https://www.ndi.org/publications/addressing-online-misogyny-and-gendered-disinformation-how-guide ; https://www.unwomen.org/sites/default/files/Headquarters/Attachments/Sections/CSW/65/EGM/Di%20Meco_Online%20Threats_EP8_EGMCSW65.pdf ; https://www.state.gov/gendered-disinformation-tactics-themes-and-trends-by-foreign-malign-actors/

[2] Տե՛ս նաև Pennycook, G., & Rand, D. G. (2021). *Fighting Misinformation on Social Media Using Crowdsourced Judgments of News Source Quality*. PNAS, 118(19). DOI: [10.1073/pnas.2024514118] Available at https://www.pnas.org/doi/10.1073/pnas.2024514118 [Accessed 05.09.2024].
UN Women (2022). Gendered Disinformation: Misinformation and Harassment Targeting Women in Politics. Available at https://www.unwomen.org/en/news/stories/2022/03/news-gendered-disinformation-in-politics [Access 05.09.2024].
Wardle, C., & Derakhshan, H. (2017). *Information Disorder: Toward an Interdisciplinary Framework for Research and Policymaking*. Council of Europe. Available at https://rm.coe.int/information-disorder-toward-an-interdisciplinary-framework-for-researc/168076277c [Access 05.09.2024].

Գենդերային ապատեղեկատվությունը[1] կարող է հասարակության մեջ թիրախավորել անհատների (անհատ կանանց), մասնավորապես՝ հանրային դեմքերի, քաղաքական գործիչների, ակտիվիստների, լրագրողների, և կանանց խմբերի՝ փորձելով վարկաբեկել, լռեցնել, վախեցնել վերջիններիս:

ՆԱՐԱՏԻՎ ԵՎ ԴԻՍԿՈՒՐՍ

Այս համատեքստում կարևոր է հասկանալ վերոնշյալ երկու հասկացությունների տարբերությունները: Եթե փորձենք պարզ ձևով բացատրել, ապա կստացվի հետևյալը. *նարատիվը*[3] (հայերենում հայտնի նաև որպես՝ պատմույթը) ավելի փոքր միավոր է, օրինակ՝ բառակապակցություն, նախադասություն, պարբերություն, տեքստ, որն ավելի մեծ գաղափարի մաս է կազմում:

Նարատիվն այն է, ինչը «պատմում են» ու այնքան են պատմում-պատմում, որ կաթիլ առ կաթիլ կուտակվում է, և վերջում բոլորը սկսում են խոսել դրա մասին, այսինքն, դա դառնում է մեկ ճանաչելի միավորի՝ *դիսկուրսի*[4] (հայերենում հայտնի նաև որպես՝ խոսույթի) մաս: Փոխաբերական լեզվով ասած, կստացվի, օրինակ, հետևյալը՝ գլուխ, ձեռք, ոտք, մազ, բերան, ատամ, սիրտ, ձեռք, որոնք բոլորը միասին մարմին են կազմում: Այս մասերը նարատիվներն են, իսկ մարմինը՝ դիսկուրսը: Օրինակ, կին քաղաքական գործիչը մեկ այլ (կին կամ տղամարդ, բայց հավանականությունը մեծ է, որ տղամարդ) քաղաքական գործչի հարց է տալիս, վերջինս կին քաղաքական գործչին պատասխանելու փոխարեն որոշում է լռեցնել նրան և ասում է՝ «քեզ չեն սովորեցրել խելացի հարցեր տալ, կին ես, չես զգում քո տեղը չի սա, սրա փոխարեն կարող էիր գնալ երեխա դաստիարակել կամ էլ դպրոցում դասավանդել»:

Սրանցից յուրաքանչյուրը *նարատիվ է*՝ «կինը տղամարդու չափ խելացի լինել չի կարող», «քաղաքականությունը կնոջ տեղը չէ», «կինը երեխաներ դաստիարակելու

---

[3] Fisher, W.R. (1984). *Narration as a Human Communication Paradigm. The Case of Public Moral Argument.* Communication Monographs, 51(1), 1-22. DOI: [10.1080/03637758409390180].
Bal, M. (1997). *Narratology. Introduction to the Theory of Narrative.* University of Toronto Press.
[4] Fairclough, N. (1995). *Critical Discourse Analysis. The Critical Study of Language*. Longman.

համար է»։ Միասին այս ամենը կազմում է ավելի մեծ, ճանաչելի *դիսկուրսի* մաս, այն է՝ «Քաղաքականություն և գենդերային ապատեղեկատվություն»։

Կարևոր է նշել, որ *գենդերային կարծրատիպերը*, մշակութային և կրոնական ասպեկտները հաճախ մի կողմից հիմք են նախապատրաստում գենդերային ապատեղեկատվության տարածման և «լեգիտիմացման» համար, մյուս կողմից արդարացնում են այդ նույն ապատեղեկատվությունը, թեև ինքնին առհասարակ գենդերային ապատեղեկատվություն չեն հանդիսանում։ Մշտադիտարկման համատեքստում այն գենդերային կարծրատիպերը, որոնք գործիք են հանդիսանում կնոջը թիրախավորելու և վնասելու համար, դիտարկվել են որպես գենդերային ապատեղեկատվության մաս։

ՄԱՍ 1. ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ. ՄԵԴԻԱՆ ԵՎ ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ԱՊԱՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀՀ-ՈՒՄ

2024 թվականի փետրվարի 1-ից հուլիսի 31-ը 12 լրատվամիջոցներում դիտարկվել է ընդհանուր 92,568 հրապարակում։ Դրանցից **332**-ում հայտնաբերվել է գենդերային ապատեղեկատվություն, որոնցից 202-ը քաղաքական ուղղվածության են եղել։

Կարևոր ենք համարում նշել հետևյալը. մնացած նյութերում թեև չի դիտարկվել գենդերային ապատեղեկատվություն, այնուամենայնիվ, գենդերային կարծրատիպեր եղել են։ Քանի որ փորձագիտական թիմը գենդերային կարծրատիպերն առանձին չի դիտարկել որպես գենդերային ապատեղեկատվության ձև (բացառության այն դեպքերի, որտեղ գենդերային կարծրատիպերը կիրառվել են որպես գործիք դիմացինին վնասելու, մասնագիտական կարողությունները կամ զբաղեցրած պաշտոնը նվազեցնելու համար), այդ հրապարակումները դուրս են մնացել մշտադիտարկման շրջանակում վերլուծությունից։

Հատկանշական է, որ գենդերային ապատեղեկատվություն պարունակող **332** հրապարակումներից գրեթե բոլորը՝ **331**-ը, հայտնաբերվել են առցանց լրատվամիջոցներում։ Մշտադիտարկման ենթարկված երկու հեռուստաընկերություններում հայտնաբերվել է գենդերային ապատեղեկատվության միայն մեկ հրապարում։

Սա ընդգծում է տեղեկատվական հարթակների միջև զգալի տարբերությունը. առցանց լրատվամիջոցներն ավելի հակված են գենդերային ապատեղեկատվություն տարածելուն, քան հեռուստաընկերությունները։

Միևնույն ժամանակ այս էական անհավասարակշռությունը հարցեր է առաջացնում առցանց լրատվամիջոցների բնույթի և գենդերային ապատեղեկատվության տարածման գործում դրանց դերի վերաբերյալ:

Ուսումնասիրելով մեդիայում գենդերային ապատեղեկատվության տիպաբանությունը եւ տարածման աղբյուրներն ու մեխանիզմները՝ կարեւոր է դիտարկել ոչ միայն այն դեպքերը, երբ ապատեղեկատվությունն ակնհայտորեն արտադրվում է հենց լրատվամիջոցների կողմից, այլև այն իրավիճակները, երբ գենդերային ապատեղեկատվությունը շրջանառվում է որպես հրապարակային հայտարարությունների, մամուլի ասուլիսների, հարցազրույցների կամ կարծիքների անվերլուծելի ներկայացում:

Այս մշտադիտարկման շրջանակում վերհանվել են այնպիսի նյութեր, որոնցում գենդերային ապատեղեկատվությունը՝ անկախ աղբյուրից, վերարտադրվել է առանց քննադատական մեկնաբանության, պարզաբանման կամ համատեքստային հակազդման: Այս պարագայում հատկապես կարևորվում է վերնագրերի ընտրության հարցը:

Հատուկ ուշադրություն է պահանջում այն մեխանիզմը, երբ գենդերային ապատեղեկատվություն պարունակող պնդումները, ընդ որում՝ նյութում երկրորդային կամ երրորդային նշանակություն ունեցող, կտրվում են իրենց ամբողջական հորիզոնական համատեքստից և վերածվում են հոդվածի առանցքային, ուղղահայաց ուղերձի՝ վերնագրի միջոցով: Այս խմբագրական կամ առհասարակ լրատվամիջոցի ընտրությունը ձևավորում է նոր, վերաձևակերպված ուղերձ, որտեղ գենդերային ապատեղեկատվությունը ձեռք է բերում առաջնային նշանակություն եւ ներկայացվում է որպես նյութի հիմնական շեշտադրում:

Այս բոլոր դեպքերում, երբ գենդերային ապատեղեկատվություն պարունակող պնդումը ներկայացվում է ոչ միայն որպես մեջբերում, այլ ընդգծվում է հենց վերնագրում՝ առանց հստակ դիրքորոշման կամ նշման, որ այն կարող է մոլորեցնող լինել, լրատվամիջոցը պասիվ փոխանցողից վերածվում է ակտիվ տարածողի:
Քանի որ վերնագիրը սովորաբար լրատվամիջոցի նյութի առաջին և հաճախ միակ ընթերցվող հատվածն է, այն կարևոր դեր է խաղում հանրային ընկալման ձևավորման գործում. սրում է ընդգծված ձևակերպումները և կարող է ձևավորել կանխակալ դիրքորոշում սոցիալական խմբերի հանդեպ, մասնավորապես՝ այն դեպքերում, եթե դրանք, ինչպես վերեւում արդեն նշվեց, ամբողջական համատեքստից կտրված են: Եվ այս միտումը, այն է՝ ամբողջական բովանդակությունից կտրված, երկրորդական կամ կողմնակի նշումները շեշտադրելու միջոցով ձևավորել թիրախային ուղերձ, հայկական մեդիայում

օրինաչափորեն է նկատվում։ Այսպիսով, վերնագիրը դառնում է ոչ թե տեղեկատվական ամփոփում, այլ խմբագրական դիրքորոշման ցուցիչ։ Այն հաճախ հանդիսանում է ընթերցողի կողմից միակ ընկալվող բովանդակությունը, և այս շեշտադրումների միջոցով կարող է ձևավորվել կանխակալ, կարծրատիպային եւ խտրական մոտեցում սոցիալական խմբերի, հատկապես կանանց հանդեպ։

Հետեւաբար, այս համատեքստում կարեւոր է դառնում ոչ միայն այն, թե ով է ստեղծել ապատեղեկատվությունը, այլ թե ինչպես կամ ինչ խմբագրական որոշումներով է այն վերարտադրվում կամ արդյոք առհասարակ կա խմբագրական որոշում կամ մոտեցում այդ առումով, թե՝ ոչ։ Այս մշտադիտարկման զեկույցի շրջանակում հնարավոր չէ այս ամենի բացահայտումը, այդ թվում՝ խմբագրական գործելակերպի մանրամասները (սա պահանջում է առանձին որակական հետազոտություն)՝ հաշվի առնելով մշտադիտարկման առաջնային նպատակը, սակայն մշտադիտարման ընթացքում եւ արդյունքում հնարավոր է դառնում առանձնացնել, թե ինչ ուղիներով է գենդերային ապատեղեկատվությունը մեդիայում տարածվում։

Այս մշտադիտարկման ընթացքում վերլուծված 332 նյութերը բացահայտել են գենդերային ապատեղեկատվության տարածման համար պատասխանատու տարբեր խմբեր։ Դիտարկվող լրատվամիջոցների վեցամսյա տվյալները ցույց են տվել, որ դեպքերի մեծ մասում լրագրողներն են եղել առաջնային տարածողները՝ պատասխանատու 155 դեպքի համար, որին հաջորդում են քաղաքական գործիչները (115 դեպք), փորձագետներն ու հասարակական գործիչները (22 դեպք), շարքային քաղաքացիները (18 դեպք), մշակույթի գործիչները (9 դեպք) և այլք (13 դեպք)։

Այսպես, սույն մշտադիարկման շրջանակում կարելի է ներկայացնել հայկական մեդիայում գենդերային ապատեղեկատվության տարածման հետեւյալ հիմնական ձեւերը՝

- *որպես բուն լրագրողական բովանդակություն, երբ լրագրողն է ապատեղեկատվության առաջնային ստեղծողը,*
- *որպես հրապարակային հայտարարությունների, մամուլի ասուլիսների, հարցազրույցների կամ կարծիքների վերարտադրություն,*
- *որպես ամբողջական նյութից կտրված հատվածի հատուկ ընդգծում, հաճախ՝ վերնագրային մակարդակում։*

Ուսումնասիրության ընթացքում արձանագրվել են մի շարք դեպքեր, երբ լրատվամիջոցները գործել են վերը նշված մոդելներով: Մասնավորապես, Hraparak.am-ում 60 հոդվածից 34-ում, civic.am-ում 43 հոդվածից 14-ում, իսկ Iravunk.com-ում 34 հոդվածից 11-ում գենդերային ապատեղեկատվությունը արտադրվել է լրագրողների կողմից:
Ի հակադրություն՝ Aravot.am-ում արձանագրված բոլոր 55 դեպքերը և Armtimes.com-ում արձանագրված բոլոր 33 դեպքերը վերաբերում էին քաղաքական և հասարակական գործիչների հայտարարությունների վերարտադրմանը: Չնայած այն հանգամանքին, որ լրագրողները չեն եղել բովանդակության սկզբնական հեղինակները, վերնագրերում շեշտադրումները, առանց մեկնաբանության ներկայացվածությունը և համատեքստի բացակայությունը ենթադրում են խմբագրական կամ լրատվամիջոցների որոշակի պատասխանատվություն:

Գենդերային ապատեղեկատվություն պարունակող համեմատաբար ավելի քիչ նյութեր են հայտնաբերվել 168.am-ում՝ 29, armlur.am-ում՝ 26, news.am-ում՝ 19, factor.am-ում՝ 18, 1in.am -ում՝ 15: Նշենք, որ սրանցում ևս գենդերային ապատեղեկատվություն ոչ բոլոր դեպքերում է լրատվամիջոցը գեներացրել, այլ՝ վերարտադրել է այլոց խոսքը:

Համակարգային դիտարկման տեսանկյունից կարևոր է նշել՝ այս ուսումնասիրության նպատակն առանձին լրատվամիջոցների քննադատությունը կամ թիրախավորումը չէ, այլ՝ մեդիա դաշտում շրջանառվող գենդերային ապատեղեկատվության բնույթի՝ նարատիվ-խոսույթ հարաբերության մեջ, կառուցվածքի և տարածման ձեւերի օրինաչափությունների դուրս բերումը: Հետեւաբար, խնդիրը համակարգային է դիտարկվում եւ պահանջում է համալիր մոտեցում եւ համակարգային լուծում. լուծումների մի մասը տեղ է գտել սույն մշտադիտարկման առաջարկների բաժնում:

Տվյալները նաև ընդգծում են գենդերային ապատեղեկատվություն տարածողների սեռի հետ կապված օրինաչափությունները: Լրագրողների մասնակցությամբ 155 դեպքերից 67-ում հեղինակի սեռը չի բացահայտվել, ինչը վկայում է ԶԼՄ-ների գործունեության թափանցիկության բացակայության մասին: Մնացած դեպքերից 54-ում գենդերային ապատեղեկատվություն պարունակող նյութերի հեղինակները տղամարդ լրագրողներ են, իսկ 34-ինը՝ կին լրագրողներ: 115 քաղաքական գործիչներից 59-ը կին են, 56-ը՝ տղամարդ: 22 փորձագետներից 16-ը արական սեռի ներկայացուցիչներ են, 6-ը՝ իգական:

Այն փաստը, որ 155 դեպքերից 67-ում (մոտ 43%) բացակայում է հստակ տեղեկատվություն հեղինակների սեռի մասին՝ անանունության պատճառով, ընդգծում է լրատվամիջոցների պրակտիկայում թափանցիկության զգալի խնդիրը: Սա կարող է արտացոլել կա՛մ խմբագրական քաղաքականությունը, որը թույլ է տալիս անստորագիր հոդվածներ, կա՛մ հեղինակների կանխամտածված ընտրությունը՝ խուսափելու վիճելի բովանդակության համար պատասխանատվությունից:

Հետաքրքիր դիտարկում է ի հայտ գալիս գենդերային ապատեղեկատվություն տարածող քաղաքական գործիչների շրջանում, որտեղ տղամարդ և կին քաղաքական գործիչների բաշխվածությունը գրեթե հավասարակշռված է: Սա վկայում է այն մասին, որ գենդերային ապատեղեկատվությունը քաղաքական դիսկուրսում բացառապես տղամարդկանց վրա հիմնված երևույթ չէ. կանայք, չնայած հաճախ գենդերային հարձակումների թիրախ են դառնում, նույնպես նպաստում են դրա տարածմանը: Սա արտացոլում է ավելի լայն դիտարկումը, որ քաղաքականության մեջ կանայք, ինչպես իրենց արական սեռի գործընկերները, կարող են օգտագործել գենդերային ապատեղեկատվությունը որպես քաղաքական գործիք:
Ինչ վերաբերում է գենդերային ապատեղեկատվություն տարածող փորձագետներին, սեռով պայմանավորված բաժանումն ավելի ընդգծված է. 16 տղամարդ փորձագետ, 6 կին փորձագետ: Սա կարող է ցույց տալ տղամարդկանց ավելի մեծ ներկայությունը կամ հեղինակությունը ԶԼՄ-ներում տարբեր հարցերի, այդ թվում՝ գենդերային հարցերի վերաբերյալ քննարկումներում կամ գենդերային ապատեղեկատվության համատեքստում:

Լրատվամիջոցների անդրադարձներում գենդերային ապատեղեկատվությունը էապես տարբերվում է: Դիտարկված 12 լրատվամիջոցները բաժանվել են երեք խմբերի՝ իշխանության ներկայացուցիչ կանանց առավել հաճախ թիրախավորող (**խումբ Ա՝** «Hraparak.am», «Iravunk.com», «168.am», «Aravot.am», «News.am», «Armlur.am»), ընդդիմության ներկայացուցիչ կանանց առավել հաճախ թիրախավորող (**խումբ Բ՝** «Armtimes.com, «Civic.am»), ինչպես նաև համեմատաբար չեզոք (**խումբ Գ՝** «Factor.am», «Շանթ», «1in.am», «Արմենիա»):

Մշտադիտարկման ենթարկված առցանց լրատվամիջոցներում գենդերային ապատեղեկատվության ճնշող առկայության (331 դեպք) և հեռուստաընկերություններում դրա գրեթե բացակայության միջև տարբերությունը (ընդամենը 1 դեպք) վկայում է այն մասին, որ առցանց տեղեկատվական հարթակներն իրենց արագությամբ, լայն հասանելիությամբ և հաճախ ավելի թույլ խմբագրական հսկողությամբ խթանում են մի միջավայր, որտեղ գենդերային ապատեղեկատվությունը հեշտությամբ կարող է զարգանալ:

ՄԱՍ 2. ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ. ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ԱՊԱՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՏԻԿ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄ. ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ԴԻՄԿՈՒՐՄՆԵՐ ԵՎ ՆԱՐԱՏԻՎՆԵՐ[5]

ԴԻՄԿՈՒՐՍ՝ ԶՈՀԻՆ ՄԵՂԱԴՐՈՂ

Հենքային տեղեկություն. Այս դիսկուրսի համատեքստում պտտվում են նարատիվներ, որոնք հիմնականում մեղադրում են զոհին, օրինակ՝ բռնության ենթարկված կնոջը կամ աղջկան: Օրինակ, կարող են ներկայացնել նման վերնագրով, տեքստով՝ «Ի՞նչ էր անում կինն այդ ժամին մենակ»: Կամ սեռական բռնության դեպքերում՝ այնպես է պատկերված, որ ակնհայտ է մեղադրական տոնը և ենթատեքստը: Օրինակ՝ «Հարց կարող է առաջանալ, այդ ուշ ժամին մենակ այդ աղջիկն ի՞նչ էր անում այդտեղ»:

Նարատիվ. Սեռական բռնության ենթարկածին/ զոհին մեղադրող նարատիվ:

- «Նոր մանրամասներ 13-ամյա աղջկա բռնաբարության գործից»: Հասանելի՝ https://armlur.am/1360210/

ԴԻՄԿՈՒՐՍ՝ ԳԵՆԴԵՐ, ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Հենքային տեղեկություն. Այս դիսկուրսի համատեքստում քննարկվում են գենդերային հարցերը, որոնք հակադրվում են ազգային անվտանգության թեմային և խնդիրներին:

[5] Մշտադիտարկման սկզբում առանձնացվել էր նաև հետևյալ լայնորեն տարածված դիսկուրսը՝ «Ֆեմինիզմը սխալ ներկայացնող, խեղաթյուրող դիսկուրս»: Այս դիսկուրսի համատեքստում Ֆեմինիզմի վերաբերյալ նարատիվներ, որոնք միտված են ֆեմինիստական շարժումների կամ ակտիվիստների վարկաբեկմանը և թիրախավորմանը, իսկ ֆեմինիզմը ներկայացվում է որպես ռադիկալ, իռացիոնալ կամ հակատղամարդկանց կամ տղամարդատյաց մի երևույթ: Սակայն մշտադիտարկման ժամանակահատված մշտադիտարկված նյութերի համատեքստում այս դիսկուրսը չի հանդիպել:

Նարատիվ. Այս պարագայում թիրախավորում են կանանց, նրանց գործունեությունը կամ գորրծունեության տեսակը՝ հստակ ածականների կիրառմամբ և պիտակավորմամբ, օրինակ՝ անվանելով «պրոթուրքական», «ծախված», «անհայրենիք» և այլն, ինչպես նաև՝ շահարկելով գենդերը և գենդերային առնչվող թեմաները՝ պաշտպանության և անվտանգության համատեքստում:

- «Վաֆլի հավաքողները»: Հասանելի՝ https://hraparak.am/post/946c461ae32c8605331bfa95ed31c500

- «Չե՞ք ամաչում, տիկին»: Հասանելի ՝ https://hraparak.am/post/631e51041bd81769fcf029fe33066cea

- «Մարտի 8-ին ընդառաջ մեր հասարակության մեջ մահ, չարություն, ատելություն սերմանող կանանց մասին. Էդգար Ղազարյան» / Հասանելի՝ https://168.am/2024/03/07/2008086.html

ԴԻՍԿՈՒՐՍ՝ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ԱՊԱՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ. ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄՏԱՇԱՀԱՐԿՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԴԻՍԿՈՒՐՍ

Հենքային տեղեկություն. Այս դիսկուրսի պարագայում հիմնականում գենդերային ապատեղեկատվությունն օգտագործվում է քաղաքական կարծիքների կամ քաղաքական գործընթացների վրա ազդելու համար, ինչպես նաև կին քաղաքական գործիչներին լռեցնելու համար: Այստեղ նարատիվները բազմատեսակ են, երբեմն էլ՝ միմյանց հետ խաչվող:

Մշտադիտարկման արդյունքում այս դիսկուրսի ներքո առանձնացվել են մի քան նարատիվներ:

1. **Նարատիվ.** Կնոջ մասնագիտական կարողությունների թիրախավորվում՝ անձնական տվյալների շահարկման միջոցով

- «Աննա Վարդապետյանը ԱԺ ամբիոնից ստել է»: Հասանելի՝ https://hraparak.am/post/10a58af8896606c887b44181ce8adb9d

2. **Նարատիվ.** Կնոջ մասնագիտական կարողությունների թիրախավորվում՝ վիճարկելու զբաղեցրած քաղաքական պաշտոնը։

- «Իսկ Փաշինյանը տեղյա՞կ է, որ Մակունցը մսխում է բյուջեի փողերը»։ Հասանելի՝ https://168.am/2024/02/03/1991950.html

- «Աննա Հակոբյանի ընկերուհի Նաիրա Հովսեփյանի գլխին սև ամպեր են կուտակվել. դրանք կցրվեն «Կարեն Անդրեասյան փրոդաքշընում»։ Հասանելի՝ https://168.am/2024/02/23/2001348.html

- «Անահիտ Ավանեսյանը բուժաշխատողներին պարտադրում է աշխատանքի ներկայանալ այնպես, ինչպես ՔՊ-ական կանայք՝ մինչ հեղափոխությունը»։ Հասանելի՝ https://168.am/2024/06/12/2058886.html

3. **Նարատիվ.** Քաղաքականության մեջ սեռն ու գենդերն օգտագործվում են որպես գործիք՝ (սովորաբար ընդդիմադիր) կին պատգամավորի կամ քաղաքական գործչի դերը, դիրքը, հեղինակությունը արժեզրկելու համար, լռեցնելու և զսպելու համար՝ թիրախավորելով նրա սեռը։

- Շանթ հեռուստաընկերության «Հորիզոն» հաղորդման։ Հասանելի՝ https://www.facebook.com/SHANTNEWS.am/videos/961368825560008

- «Պետք է գնալ Աննաների ու Ժաննայի աշխատասենյակներ՝ ձեռնաշղթաներով ուղեկցել Աբովյանի ՔԿՀ. Զարուհի Փոստանջյան»։ Հասանելի՝ https://hraparak.am/post/26305a391877a36f0bf3ffdfaff515ba

- «Հրապարակ». Հայրենիքի համար պայքարողներն «անաղեկվատ» են, իսկ Պապ թագավորը չի մեռնելու»։ Հասանելի՝ https://hraparak.am/post/8a9037e44b5c7b0e021581fee6fe740a

- «Ընկերուհիներով մեկնել են Եվրոպա՝ ֆոֆռալու»։ Հասանելի՝ https://hraparak.am/post/631e51041bd81769fcf029fe33066cea

- «Ինչ-որ տեղ՝ իշխանության և ընդդիմության արանքում»։ Հասանելի՝ https://hraparak.am/post/56886a8937bcdf7bc900edb0ce342a64

- «Ալո, դա ՄԻՊ-ի տո՞ւնն ա… այո… կներեք, իսկ ՄԻՊ-ը տա՞նն ա…»։ Հասանելի՝ https://hraparak.am/post/260cc9378a0cc6c1a53c0bd854a533c5

4. **Նարատիվ.** Քաղաքականության մեջ գենդերային կարծրատիպերն օգտագործվում են որպես գործիք՝ կին պատգամավորի կամ քաղաքական գործչի դերը, դիրքը, հեղինակությունը արժեզրկելու համար, լռեցնելու և զսպելու համար՝ թիրախավորելով նրա սեռը։

- «Կին, երեք զավակների մայր Արմենուհի Կյուրեղյանն ասում է՝ մեր բակում ոչ միայն ասում են, այլև՝ անում, ի՞նչ, տիկին. վարչապետ»։ Հասանելի՝ https://armtimes.com/hy/article/284650

- «Անեծքի ու նզովքի վրա մասնագիտացած տիկինը, ցավոք, մենակ չէ խոստանալ, չգնալու հարցում. Գալստյանը չի գնացել Հ1»։ Հասանելի՝ https://armtimes.com/hy/article/286796

- «Եթե տիկին Կյուրեղյանին չկառավարեք, ինձանից չնեղանաք, վստահ եղեք՝ բոլորիդ դուրս կհանեմ. Սիմոնյանը՝ ընդդիմությանը»։ Հասանելի՝ https://armtimes.com/hy/article/289419

5. **Նարատիվ.** Քաղաքականության մեջ ընտանիքի անդամներին, մասնավորապես, կնոջը/ ամուսնուն ու երեխաներին, ինչպես նաև իգական սեռի այլ ազգականին օգտագործել որպես գործիք՝ քաղաքական գործչին թիրախավորելու համար։

- «Ցուցարարներին անիծող կինը ՔՊ-ական Մարիա Կարապետյանի հորաքու՞յրն է»։ Հասանելի՝ https://hraparak.am/post/44c2bdbd82c39eced0ce9e46cc4d80fb

- «Ի՞նչ է ուզում ԱԺԲ-ն. Փաշինյանի ամերիկյան տերերը դժգո՞հ են նրանից»։ Հասանելի՝ https://hraparak.am/post/82bcebeeafb5eab591091a77b3b4e314

6. **Նարատիվ.** Քաղաքականության մեջ քաղաքական մտաշահարկման նպատակով հումորի և անեկդոտի կիրառում, կամ այլ պատումինների կիրառում, օրինակ՝ առականման, որի կենտրոնում կնոջ մասին պատումն է՝ այդպսիով կնոջ միջոցով թիրախավորելով տղամարդուն:

- «Ավաղ, խեղճ Յորիկ»: Հասանելի՝ https://hraparak.am/post/9a4a2f38445f5718561092a5030747d1

- «Արշակ Կարապետյանը պատերազմից հետո միտումնավոր և հոգուտ երրորդ երկրի բանակը չի հանել «նոկաուտից»: Հասանելի՝ https://civic.am/news/140505-styopa-safaryan-arshak-karapetyan

7. **Նարատիվ.** Քաղաքականության մեջ կնոջ անձնական տվյալներն ու անձնական կյանքին առնչվող տվյալները քաղաքական մտաշահարկման նպատակով օգտագործելու համար՝ թիրախավորելով կին քաղաքական գործչին:

- «Չե՞ք ամաչում, տիկին...»: Հասանելի՝ https://hraparak.am/post/631e51041bd81769fcf029fe33066cea

ԴԻՍԿՈՒՐՍ՝ ՓՈԽՀԱՏԱԿԱՆ (ԻՆՏԵՐՍԵԿՑԻՈՆԱԼ) ԴԻՍԿՈՒՐՍՆԵՐ

Հենքային տեղեկություն. Փոխհատական են այն դիսկուրսները, որոնք զուգահեռաբար ներառում են մի քանի դիսկուրսներ միևնույն տեղեկության մեջ, որոնք մեկը մյուսին աջակցող են և փորձում են մի քանի դիսկուրսներ առաջ տանել:

Նարատիվ. Այս պարագայում շրջանառվում է կանանց կարողությունների, գենդերի, օրենսդրական փոփոխությունների, օտարածին, հիմնականում՝ արևմուտքի օրակարգի վերաբերյալ ապատեղեկատվություն:

- «Հրապարակ». ՔՊ-ականները օրենքով պաշտպանության տակ են առնում նույնասեռականներին. նախագիծ է մշակվել»: Հասանելի՝ https://hraparak.am/post/bd9e542e04d7ed3202f9cabb05db227c

ԴԻԱԿՈՒՐՍ՝ ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ՀԱՎԱՍԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ԴԻՍԿՈՒՐՍ

Հենքային տեղեկություն. Գենդերային հավասարության քաղաքականության կամ նախաձեռնությունների մասին կեղծ տեղեկատվության տարածում: Օրինակ՝ ԵԽ N 210 կոնվենցիայի, ընտանեկան բռնության վերաբերյալ ՀՀ օրենքի, կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների մասին ՀՀ օրենքի վերաբերյալ:

Նարատիվ. Գենդերային հավասարության և հիմնահարցերի վերաբերյալ ծրագրերի և միջոցառումների ազդեցության վերաբերյալ ապակողմնորոշիչ նարատիվների շրջանառում:

- «Հրապարակ». ՔՊ-ականները օրենքով պաշտպանության տակ են առնում նույնասեռականներին. նախագիծ է մշակվել»: Հասանելի՝ https://hraparak.am/post/bd9e542e04d7ed3202f9cabb05db227c
- «Ի՞նչ հիմնավորմամբ են ՔՊ-ական կին պատգամավորները որոշել, որ կուսության ստուգումը պետք է արգելվի»: Հասանելի՝ https://armlur.am/1337526/

ԴԻՍԿՈՒՐՍ՝ ԿՆՈՋԸ ՍԵՌԱԿԱՆԱՑՆՈՂ, ԱՊՐԱՆՔԱՅՆԱՑՆՈՂ ԵՎ ԱՌԱՐԿԱՅՆԱՑՆՈՂ ԴԻՍԿՈՒՐՍ

Հենքային տեղեկություն. Այս դիսկուրսը պարունակում է այնպիսի տեղեկություն, որը կնոջ արժանիքները, այսպես ասած, իջեցնում է միայն նրա ֆիզիկական արտաքինի մակարդակին կամ սեռապես գրավիչ լինելուն: Օրինակ, կին քաղաքական գործչին կամ կին բժշկին ներկայացնում են իրենց արտաքին տեսքն ընդգծելով:

Նարատիվ. Նարատիվ, որը փորձում է ցույց տալ, որ կինն իր մասնագիտական և մտավոր ունակություններով որևէ բանի ինքնուրույն չի հասնում կամ չի կարող հասնել, այլ նրա կողքին պետք է լինի մեկը, հիմնականում՝ արական սեռի

ներկայացուցիչ, որի հետ ինչ-որ կապի, մտերմության, ընկերության կամ հարաբերության միջոցով է նա ստանում դիրք կամ պաշտոն:

- «Ո՞վ է քաղաքապետարանի վերահսկողության վարչության նոր պետը»: Հասանելի՝ https://hraparak.am/post/d0a1577168cdfa73873f38ecadcb3f61
- «Նիկոլ Փաշինյանին սատարող կանայք ծայրահեղ տգեղ են»: Հասանելի՝ https://168.am/2024/03/07/2008086.html

ՄԱՍ 3. ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ. ՕՐԻՆԱԿՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

- Քաղաքականություն և գենդերային ապատեղեկատվություն. քաղաքական մտաշահարկման նպատակով իրականացվող դիսկուրս.

Մշտադիտարկված նյութերից մեկը Շանթ հեռուստաընկերության ցանկից «Հորիզոն» լրատվական է: Մշտադիտարկման ժամանակահատվածում միայն մեկ հաղորդման ժամանակ է, որ դիտարկվել է գենդերային ապատեղեկատվություն: Հաղորդման մեջ գենդերային ապատեղեկատվություն տարածողը արական սեռի ներկայացուցիչ է՝ բարձրաստիճան պաշտոնյա: Ստորև ներկայացնում ենք համապատասխան հատվածը.

Հատված. «Պատասխանելով ընդդիմադիր պատգամավոր Աննա Գրիգորյանի՝ Արցախյան հիմնախնդրին առնչվող հարցերին և դիտարկումներին՝ ԱԳ նախարար Արարատ Միրզոյանն ասում է. «Ես չընդհատեցի Ձեզ... նաև **սեռային հարգանքից ելնելով**... Դուք որ ինձ ասում եք կատարում եք պատվեր, Դուք կոռեկտ չպտի լինեք, ես լինե՞մ: Ես էլ եմ շարունակում, **ինձ մի ընդհատեք**... **Ուրեմն Դուք կատարում եք պատվեր, լավագույն դեպքում Ձեր համար՝ չգիտակցված:** Որովհետև վատագույն դեպքում էդ իրավիճակում, Ձեր մասին շատ ավելի վատ կխոսամ[6]»:

Վերլուծություն. Սույն օրինակում կնոջ սեռն ու գենդերն օգտագործվում են որպես գործիք՝ ընդդիմադիր կին պատգամավորի դիրքն արժեզրկելու համար՝ ընդգծելով, որ վերջինիս հանդեպ հարգանքն ու զսպվածությունը պայմանավորված է բացառապես նրա սեռով, այն է՝ կին լինելով: Սա հայտնի մարտավարություն է, որը

[6] Աղբյուր՝ https://www.facebook.com/SHANTNEWS.am/videos/961368825560008 [Մուտք՝ 10.09.2024]:

կիրառվում է քաղաքական համատեքստում առհասարակ, այդ թվում՝ թե՛ իշխող կուսակցությունների, թե՛ ընդդիմադիրների կողմից: Նման ձևով փորձ է արվում ուշադրությունը տեղափոխել փաստարկից, բուն հարցից և բովանդակությունից դեպի անձի սեռը և/ կամ գենդերը: Բացի այդ, «վատագույն դեպքում էդ իրավիճակում, ձեր մասին շատ ավելի վատ կխոսամ» արտահայտությունը ենթադրում է սպառնալիք և ահաբեկում: Նման մարտավարությունը իր հերթին կիրառվում է դիմացինին լռեցնելու և «զսպելու» համար:

Կին քաղաքական գործչին լռեցնելուն, կնոջ կարողությունները, հմտությունները, գիտելիքն ու փորձը, ինչպես նաև գործունեությունն արժեզրկելուն միտված գենդերային ապատեղեկատվության մեկ այլ օրինակ է դիտարկվել Hraparak.am-ի հետևյալ հոդվածում, որտեղ հոդվածագիրը (արական սեռի ներկայացուցիչ) թիրախավորվում է ՀՀ ԿԳՄՍ նախարար Ժաննա Անդրեասյանը: Ստորև ներկայացնում ենք համապատասխան հատվածը.

Հատված. «**Ո՞ւր մնաց կնոջ արժանապատվությունը, այ հիմար, թող հեռացիր**»: ... «**Տիկին, մտածե՞լ եք արդյոք, թե ձեր մտքի փայլատակում դասագրքերը ու՞ր են տանելու մատաղ սերնդին**[7]»:

Վերլուծություն. Գենդերային ապատեղեկատվության նման օրինակի միջոցով փորձ է արվում կասկածի տակ դնել կնոջ՝ որոշումներ կայացնելու կարողություններն ու գիտելիքը, նվազեցնելով նրա մասնագիտական կարողությունները, վերջինիս սեռով պայմանավորված անձնական թիրախավորումների-հարձակումների միջոցով: «**Ո՞ւր մնաց կնոջ արժանապատվությունը, այ հիմար, թող հեռացիր**» արտահայտությունը անձնապես կենտրոնանում է նախարարի վրա՝ որպես կին, թիրախավորում նրա արժանապատվությունը և բովանդակային քննարկում ծավալելու փոխարեն շեղում և տանում է դեպի գենդերային ուղղությամբ: Ստացվում է, որ իբրև արժանապատվության հատուկ ձև կա, որը բնորոշ է հենց կնոջը, որի մասին վերջինիս պիտի իմանա, բայց չգիտի կամ չունի՝ ըստ հեղինակի: Մարտավարության այս տեսակը հաճախ է կիրառվում է հենց գենդերային ապատեղեկատվության դեպքում՝ թիրախավորելով հենց կին քաղաքական

[7] Աղբյուր՝ https://hraparak.am/post/a488356369feaab285703d377fe89d71 [Մուտք՝ 10.09.2024]:

գործիչներին, հանրային դեմքերին և մասնագետներին։ Այս օրինակը ևս բացառություն չէ։

Կին քաղաքական գործչին լռեցնելուն, վերջինիս փորձն արժեզրկելուն միտված գենդերային ապատեղեկատվության մեկ այլ օրինակ է դիտարկվել Aravot.am-ի «Հո դուք դառ-դառ չեք, հարգելի ընդդիմություն… Հո դուք ջադու չեք». Արթուր Հովհաննիսյանի պատասխանը ՀՅԴ-ին» վերտառությամբ հոդվածի հետեւյալ հատվածում, որտեղ տղամարդ քաղաքական գործիչը թիրախավորում է ընդդիմադիր կին քաղաքական գործչին հետեւյալ կերպ.

Հատված. «ԱԺ հայտարարությունների ժամին ասաց ՔՊ խմբակցության քարտուղար Արթուր Հովհաննիսյանը նշում է, որ ընդդիմադիրները ԱԺ-ում «վեհ» գաղափարներից են խոսում. «**Օրինակ, դաշնակ Լիլիթ Գալստյանը իբրեւ թե վեհ արժեքներից է խոսում, թե Ակադեմիական քաղաք եք սարքում կործանվող երկրում,** կազմալուծվող երկրում եւ այլն եւ խոսում է իր կողմից կրթության կարեւորության մասին։ Ձեր դաշնակ նախարարի կողմից սաղ մանկապարտեզներն ու դպրոցները ծախեցիք, հիմա եկել քննադատո՞ւմ եք Ակադեմիական քաղաքը, էդ լո՞ւրջ եք ասում, տիկին Գալստյան, մի հատ մտածեք, նոր խոսեք, խնդրում եմ։ Կամ ի՞նչ է նշանակում՝ էս կազմալուծվող երկրում, նախ ձեզ հորդորում եմ, հո դուք դառ-դառ չեք, հարգելի ընդդիմություն, էս ի՞նչ եք խոսում։ Իմ պետության, ՀՀ սուվերեն պետության մասին **չհամարձակվե՛ք անեծքով խոսել, հո դուք ջադու չեք, դուք քաղաքական ընդդիմություն եք,** խոսեք քաղաքական լեքսիկոնով, չի կարելի անիծել ՀՀ-ին ու ժողովրդին, դուք դա եք անում»։

Վերլուծություն.

Տղամարդ քաղաքական գործչի կողմից կիրառվող հետեւյալ արտահայտությունը՝ «**էդ լո՞ւրջ եք ասում, տիկին Գալստյան, մի հատեք, նոր խոսեք, խնդրում եմ**», թիրախային է. կասկածի տակ է դնում, թե արդյոք ընդդիմադիր կին քաղաքական գործիչը լուրջ է եւ դրանով իսկ փորձում է նվազեցնել ասածի նշանակությունը։ Սա ոչ թե պարզապես վիրավորական կամ հեգնական արտահայտություն է, այլ նաեւ հաճախ օգտագործվում է որպես մարտավարություն՝ կին քաղաքական գործիչների կարծիքները որպես պակաս հիմնավոր, պակաս կարեւոր ընդգծելու համար։ Սա առհասարակ գենդերային ապատեղեկատվության ամենատարածված տարբերակներից մեկն է, որը միտված է կասկածի տակ դնելու կանանց ասածը եւ ասածի արժանանահավատությունը։ Հաջորդիվ, տղամարդ քաղաքական գործիչը ոչ միայն ասածի, այսպես ասած, անլրջությունն է ընդգծում, այլ նաեւ փորձում է անդրադառնալ կին քաղաքական կերպարի անլրջությանն առհասարակ։ Այսպես,

այս հատվածում՝ «...**չհամարձակվե՛ք անեծքով խոսել, հո դուք ջադու չեք, ...»,** տղամարդ քաղաքական գործիչը նախ տալիս է գենդերային ենթատեքստ, քանի որ «**ջադու**» բառն օգտագործվում է հենց կանանց մասին՝ կապված չարախոսության, կախարդության եւ մոգության հետ։ Բացի այդ, այս արտահայտությունը կամ նմանատիպ արտահայտությունները, օրինակ, որտեղ «ջադու» բառի փոխարեն օգտագործում են «կախարդ» բառը, հաճախ ուղղված է կանանց առհասարակ, այդ թվում՝ նաեւ կին քաղաքական գործիչների կերպարը եւ պրոֆեսիոնալ գործունեությունը նվազեցնելով, անլրջացնելով։

Այս հատվածը հրապարակվել է Aravot.am-ի կայքում[8]։ Հարկ է նկատել, որ թեեւ հոդվածն ինքնին ամբողջությամբ մեջբերում է, բայց նույնիսկ վերնագրի մակարդակում՝ ընտրելով հենց գենդերային ապատեղեկատվության մասը ներկայացնելով որպես վերնագիր, կայքը դառնում է հենց գենդերային ապատեղեկատվության ընդգծողն ու տարածողը, թեեւ ոչ ստեղծողը։

Մեկ այլ օրինակում գենդերային կարծրատիպերի մի ամբողջ շարք է օգտագործվում, առաջին հայացքից, պարզապես ընդհանրական ձեւով կանանց տեղի եւ դերի մասին խոսելու համար, մասնավորապես՝ ընտանիքի տիրույթում, սակայն վերջում պարզ է դառնում, որ այդ կարծրատիպերի շարքն օգտագործվում է որպես գործիք կոնկրետ կնոջը թիրախավորելու եւ մեղադրելու համար, կրկին՝ քաղաքական դիտանկյունից, ընդ որում թիրախավորելով կնոջը, քաղաքական մտաշահարկման նպատակով թիրախավորելով նաեւ վերջինիս ամուսնուն։

Հատված. «Հոգեբան Կարինե Նալչաջյանը «Հայելի» ակումբում շնորհավորելով բոլոր կանանց մարտի 8-ը՝ նշեց, որ այսօր զրկվել ենք մեր նվիրական շատ տոներից, բայց պետք է պահպանենք մեր տոները եւ փորձենք այսօր մի փոքր տոնական տրամադրություն ունենալ, որովհետեւ սա շատ սիրված տոն է ժողովրդի կողմից։ Այնուհետեւ նա խոսեց կանանց եւ տղամարդկանց հոգեբանությունների միջեւ եղած տարբերությունների մասին։ [...] **Կնոջ էությունը արարող, ստեղծող, պահպանող էություն է, կինը խաղաղեցնող, պահպանողի դերն է կատարում։ Կորած է այն ընտանիքը, որտեղ կոնֆլիկտային իրավիճակների, վեճերի հիմքում կինն է կանգնած։ Գանք մեր չարաբաստիկ օրերին, որում ապրում ենք մենք, մեր հայրենիքը։ Պետական համակարգը ճաքեր է տալիս։** Թշնամին մեզ ներսից եւ դրսից ոչնչացնելու լավ մտածված հեռահար քայլեր է կատարում։ Օրվա խորհրդից դուրս չգանք։ **Մենք՝ կանայք, այստեղ մեծագույն դեր ունենք։ Այսօր Հայաստանին մայրական կերպարը շատ պետք է եւ որպես հավաքական կերպար մենք պետք է**

[8] https://www.aravot.am/2024/03/19/1406707/

առաջին շարքերում լինենք: Տեսեք, ինչքան որդեկորույս մայրեր ունենք, ամուսիններին կորցրած կանայք ունենք, ինչքան ունենք հարսնացուներ, որոնց փեսացուները գնացին ու չվերադարձան: Սա նաեւ կանանց, մեր կանացիությանը հասցված մեծագույն ողբերգություն է: Հետեւաբար, կանայք պետք է դուրս գան պասիվությունից եւ տեր կանգնեն մեր պետությանը: Հակառակ դեպքում աղետն արդեն թակում է մեր դռները»,-ասաց տիկին Նալչաջյանը:

Նա բացի արարող, փրկող, խաղաղություն հաստատող կանանցից, խոսեց նաեւ չարամիտ, խառնակիչ, ոչնչացնող կանանց մասին: «Եթե կինն է այդ դերն իր վրա վերցնում, ուրեմն շատ վտանգավոր հետեւանքներ պետք է սպասել: Նայենք, այսպես կոչված, երկրի առաջին դեմքին, որի կողքին կնոջ ներկայությունն անընդհատ կա, Ինձ ոչինչ հայտնի չէ այդ տիկնոջ մանկության, անցած կենսուղու մասին: Բայց այն, ինչ գիտենք նրա ամուսնու մասին, ինչքան հասկանում եմ, եղել է մոր բավականին ողբերգական կերպար: Առանց մայր է մեծացել, Աստված գիտի՝ ինչ թշվառ մանկության միջով է անցել: Այսպիսի դեպքերում տղամարդիկ ունենում են կանանցից կախվածություն: Այսինքն, այն կինը, որ հայտնվում է նրանց կյանքում, միաժամանակ մի քանի դեր է կատարում: Եվ այստեղ բարոյական իմաստով մի տանդեմ է առաջացել ու սրանք իրենց մուտանտային խմբի հետ մասին բարոյական խնդիր ունեն: Ես միշտ ասել եմ՝ պրակտիկորեն առողջ է մարդը, իսկ այս մարդիկ ունեն բարոյական խնդիրներ: Մեզանից ցանկացածը կարող է կյանքում հոգեբանական խնդիրների մեջ մտնի, դուրս գա, սահմանային վիճակներում գտնվի: Երեւույթ կա, որ կոչվում է անձի շեշտվածություններ, բնավորության շեշտվածություններ, որոնք շատ մոտ են ախտաբանականին, բայց ախտաբանական չեն: Ինչն է ինձ հուշում, որ այս մարդիկ բարոյականության հետ կապված խնդիրներ ունեն: Տեսեք, այսքան կորուստներ, այսքան արյուն, ցավ պատճառել երկրին, հայրենիքին, մարդկանց, ընտանիքներն եւ բացարձակապես մեղքի զգացում չունենա՞լ, խղճի խայթ չունենա՞լ: Սա շատ լուրջ հարց է: Արյան գետեր հոսեցին եւ եթե այսպես շարունակվի, դեռ կհոսեն: Ու բացարձակապես մեղքի զգացում չկա: Նույն օրը՝ խնջույք, հաջորդ օրը՝ սելֆիներ, մինչեւ ականջները բաց արված բերաններ... Այս առումով իրենք գտել են իրար եւ միասին, տանդեմով հրաշալի աշխատում են՝ չունենալով բարոյական սկզբունքներ, անընդհատ գտնվելով եսակենտրոնության մեջ: Եվ մեր հայրենիքը, մեր երկիրը հայտնվել է այս մարդկանց ձեռքում: **Ես հոգնակիով եմ ասում, որովհետեւ ղեկը, ես կասեի՝ առաջին հերթին, տիկնոջ ձեռքին է եւ հետո միայն ամուսնու»,**- ախտորոշեց հոգեբանը:»

Վերլուծություն. Այս օրինակի զգալի մասը, ինչպես արդեն նշեցինք վերեւում, կենտրոնանում է այն չհիմնավորված կարծիքի վրա, որ կանանց հիմնական դերը «արարող, ստեղծող, պահպանող» լինելն է, իսկ հիմնական տեղը՝ ընտանիքում, հիմնական առաքելությունն էլ՝ ընտանիքում խաղաղություն հաստատելը: Սա սահմանափակում է կանանց տեղն ու դերը, ընդգրկվածությունն ու մասնակցությունը հասարական կյանքի տարբեր ոլորտներում: Սա գենդերային ապատեղեկատվության տարածված ձևերից մեկն է. երբ կանանց ներկայացնում են միայն «մասնավորի/ կենցաղայինի/ ընտանիքի/ տիրույթում, ինչը նվազեցնում է նրանց հասարակական, քաղաքական և տնտեսական դերերը:

Հոգեբանն օգտագործում է «չարամիտ, խառնակիչ, ոչնչացնող» բառ-արտահայտությունները՝ նկարագրելու, իսկ իրականում՝ թիրախավորելու կանանց, որոնք չեն համապատասխանում վերոնշյալ հիմնական դերերին: Հաջորդիվ մասնագետը նաեւ նշում է, որ եթե կինն է «ոչնչացման» կամ «կազմալուծման» հիմքում, ապա դա շատ ավելի վտանգավոր է: Գենդերային ապատեղեկատվության կուլմինացիան հասնում է վերջում, երբ մասնագետը թիրախավորում է կոնկրետ անձի, տվյալ պարագայում՝ ՀՀ վարչապետի տիկնոջը՝ առանց որեւէ հիմքի, փաստի կամ փաստարկի՝ ներկայացնելով տիկնոջը որպես վտանգավոր՝ ոչ միայն իր ամուսնու համար, այլ նաեւ անուղղակիորեն մի շարք քաղաքական, սոցիալական խնդիրների համար մեղքը բարդելով նրա վրա:

Այս հատվածը հրապարակվել է Aravot.am-ի կայքում[9]: Հարկ է նկատել, որ այս հոդվածը եւս հիմնված է մեջբերումների վրա, բայց կրկին վերնագրի մակարդակում՝ ընտրելով հենց գենդերային ապատեղեկատվության մասը ընթերցողին ներկայացնել որպես վերնագիր, կայքը դրանով իսկ դառնում է հենց գենդերային ապատեղեկատվության տարածողը:

Սույն տեսանյութում կին քաղաքական գործչի կերպարը կրկին թիրախում է գենդերային ապատեղեկատվություն համատեքստում: Ստորեւ ներկայացնում ենք հատվածը եւ համապատասխան վերլուծությունը.

Հատված. «Տիկին Կյուրեղյանն իրեն պահում է, չեմ ուզում ասել [...] չեմ ուզում ամենավատ ձեւակերպումները տամ [...]:

9 https://www.aravot.am/2024/03/08/1404825/?fbclid=IwY2xjawGE6MJleHRuA2FlbQIxMAABHUGVRejMZ1-Waom2dmwgLFsWTBJFQO8dU_QHTBYb5WrBCaTjy7F7Cn0aJQ_aem_fnJAl1eVBQ9Q4XGp6EdPLw

Նախ, տիկին Կյուրեղյան, լքեք դահլիճը, ես Ձեզ խնդրում եմ, լքեք դահլիճը, Դուք հիմա ադեկվատ չեք, խնդրում եք, լքեք, ես Ձեզ խնդրում եմ, լքե՛ք դահլիճը, ես Ձեզ խնդրում եմ, լքե՛ք դահլիճը։ [...] Պարո՛ն Օհանյան, պարո՛ն Օհանյան, ես չեմ հասկանում, Դուք տիրապետու՞մ եք Ձեր կուսակցությանը, [...]եթե տիրապետում եք, տիկին Կյուրեղյանին կարգի հրավիրեք, ես ինձ թույլ չեմ տալիս անվտանգության աշխատակիցներին ներս հրավիրել, [...] Դուք էկել եք էսօր ստեղ, որպեսզի հրահրեք, [...] տիկին Կյուրեղյան, [...] կինն առաջինն է սկսել հայհոյել, լռությու՛ն, միակ բանը, որ ես լսել եմ, կնոջ հայհոյանքն էր եւ վատ պահվածքը, ուրիշ ոչ մի բան[10]։»

Վերլուծություն. Նախ թիրախում հայտնվում է կին քաղաքական գործչի վարք, որը պիտակավորվում է, որպես «վատ»։ Այս ամենն ուժգնացնելու համար ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանը իր խոսքում եւս մեկ անգամ նշում նույն բանը, այն է՝ տիկին Կյուրեղյանի վարքը վատն է, ոչ ադեկվատ։ Նշենք, որ վարքի/ վարքագծի հետ կապված, դրա լավ կամ վատ լինել, ընդունելի եւ չընդունելի լինելու հետ կապված հենց կանայք են նախեւառաջ եւ հիմնականում թիրախավորվում։ Սա էլ ավելի ցայտուն է երեւում Ալեն Սիմոնյանի խոսքի հաջորդ մասում, որտեղ նա հատուկ շեշտադրությամբ նշում է պատգամավորի կին լինելը եւ «վատ վարքի» որպես ապացույց ավելացնում է՝ «կինն առաջինն է սկսել հայհոյել»։ Ստացվում է, որ հատուկ նորմեր կան, որոնցով կինը պետք է շարժվի առաջ, մինչդեռ այդ նորմերը պետք է տարածելի լինեն բոլորի վրա, այս համատեքստում՝ քաղաքական գործիչների, ԱԺ պատգամավորների վրա՝ անկախ սեռից։

Այսպիսով, վերոնշյալ դիտարկումներն ցույց են տալիս, որ տեսանյությում առկա են սեռի եւ գենդերի հիմքով թիրախավորում եւ ապատեղեկատվության տարածում, քանի որ կին քաղաքական գործրի վարքը դիտարկվում է որպես «ոչ ադեկվատ», «վատ»՝ հատկապես վերջինիս սեռին եւ հետեւաբար գենդերին համապատասխան ակնկալվող վարքի չհամապատասխանելու պատճառով։

[10] https://civic.am/news/aj%20larvac?fbclid=IwY2xjawGV8oJleHRuA2FlbQIxMAABHZZyrImwzPJOn2obMUkIK2ryno_f486D8b29zdy1c2a-i37k2TbBHXlk7g_aem_WNXrt3umy536F8jHkB33NQ

- Փոխհատական դիսկուրսներ

Փոխհատվող ապատեղեկատվության դիսկուրսներն ամենադժվար վերլուծվող, միաձուլված, երբեմն տարրալուծված դիսկուրսներն են, որոնք արժանի են առանձին վերլուծության: Ստորև ներկայացնում ենք համապատասխան հոդվածից մի հատվածը, որը հրապարակվել էր Հրապարակ օրաթերթում.

Հատված. «ԱԺ «Քաղաքացիական պայմանագիր» **խմբակցության մի խումբ կանայք աղմկահարույց նախագծերի փաթեթ են ներկայացրել**, որն այսօր կքննարկվի ԱԺ գլխադասային հանձնաժողովում: **Զարուհի Բաթոյանը, Սոնա Ղազարյանը և Ծովինար Վարդանյանը փոփոխություններ են առաջարկում** «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» օրենքում: Բայց խնդիրը ոչ թե բռնության դեմ պայքարն է, **այլ սորոսական որոշ տերմիններ ամրագրելը**: Կանայք առաջարկում են ներմուծել «զուգընկեր» հասկացությունը, **որով քողարկված պաշտպանության տակ են առնում նույնասեռականներին**[11]:»

Վերլուծություն. Վերոնշյալ օրինակն իր մեջ ապատեղեկատվության մի քանի տարրեր է պարունակում ՝ արժեզրկելով և նվազացնելով կանանց որպես որոշումների կայացնողների դերն ու դիրքը, ինչպես նաև հեղինակությունը՝ կիրառելով «ԱԺ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության մի խումբ կանայք» արտահայտությունը: Այս օրինակում օրենսդիր մարմնի ներկայացուցիչները ներկայացվում են այնպես, որ նվազեցնում է նրանց հեղինակությունը՝ կենտրոնանալով նրանց սեռի վրա, այլ ոչ թե դերերի, նպատակի, կարողության կամ փորձի վրա:

Երկրորդ, գերպարզեցված, գերընդհանրացված և գերտարածում գտած կարծրատիպերը հիմք են հանդիսանում քաղաքական շահարկման և գենդերային ապատեղեկատվության՝ **«սորոսական որոշ տերմիններ ամրագրելը»** արտահայտությունը ենթադրում է, որ կին պատգամավորների կողմից առաջ քաշած հարցերն ու առաջարկները ոչ թե իրական խնդիրներ են և լուծումներ, այլ արտաքին, օտար օրակարգի մաս են կազմում՝ կապելով այն այս կամ այն հանրային, քաղաքական կամ գաղափարական գործչի կամ կերպարի հետ, տվյալ

[11] Աղբյուր՝ https://hraparak.am/post/bd9e542e04d7ed3202f9cabb05db227c [Մուտք՝ 10.09.2024]:

դեպքում՝ Ջորջ Սորոսի: Սա կատարվում է միտումնավոր՝ էլ ավելի արժեզրկելու կին քաղաքական գործիչների նպատակները և նախաձեռնողականությունը:

Եվ վերջապես, կենտրոնանալով «զուգընկեր» եզրույթի վրա՝ խեղաթյուրվում է օրենսդրական նախաձեռնությունը՝ նշելով, որ «կանայք առաջարկում են ներմուծել «զուգընկեր» հասկացությունը, որով քողարկված պաշտպանության տակ են առնում նույնասեռականներին»: Սա միտված է իրական խնդրից շեղելուն և քաղաքական գործընթացներում կանանց դերն ու գործունեությունը թիրախավորելուն, և խաթարելուն՝ խեղաթյուրելով նրանց գործունեությունը, գործողությունները և մտադրությունները: Նյութը կասկածի տակ է դնում կին պատգամավորների առաջարկների կարևորությունն ու լրջությունը,խեղաթյուրում օրենքի փոփոխության նպատակը և առհասարակ օրենքի նախագծի փոխփոխությունները՝ շահարկելով դրանք և նշելով, որ նրանց իրական նպատակը ոչ թե ընտանեկան բռնության կանխարգելումն է, այլ նրանք ունեն թաքնված նպատակներ, այդ թվում՝ ոչ հայանպաստ օրակարգի առաջխաղացում:

Գենդերային ապատեղեկատվության հոսքն ավելի թիրախային դարձնելու համար հոդվածում օգտագործվում է նաև կանանց լուսանկարները: Հոդվածը ոչ միայն տեքստային մակարդակում ապատեղեկատվական, այլ նաև՝ վերնագրի:

- Զոհին մեղադրող դիսկուրս

Զոհին մեղադրող դիսկուրսի համատեքստում զոհին երկրորդային զոհացման է ենթարկվում, ընդ որում, սա կարող է արվել ոչ թե ուղիղ վերջինիս մեղադրելով, այլ՝ «նուրբ», անուղղակի, ենթատեքստային, «միամիտ թվացող» բառ, բառակապակացություն կամ նախադասություն օգտագործելով: Սա այն ակտիվ մարտավարություններից մեկն է, որ օգտագործվում է գենդերային ապատեղեկատվության ժամանակ: Ստորև ներկայացնում ենք նման մի օրինակ, որը ևս դուրս է բերվել մշտադիտարկման արդյունքում:

Հատված. «Ինչպես գրել էր **Aysor.am**-ը՝ ապրիլի 11-ին ոստիկանության Վարդենիսի բաժնում օպերատիվ տեղեկություններ են ստացվել, որ Սոթք և Ակունք գյուղերի

բնակիչ 2 տղամարդ սեքսուալ բնույթի գործողություններ են կատարել 2011 թ ծնված մի աղջկա նկատմամբ»:

ArmLur.am-ի ուշագրավ տեղեկություններով՝ վերոնշյալ դեպքերը նույն ժամանակահատվածում չեն եղել, ըստ տեղեկությունների՝ առաջին անգամ աղջկան բռնաբարել է 72-ամյա տղամարդը, որոշ ժամանակ անց 70-ամյա տղամարդը:

Տեղի բնակիչները իրավապահների հետ զրույցում ասում են, որ 13-ամյա աղջիկը այդքան էլ չի փայլել վարքով[12]: Հիշեցնենք, որ մենք գործ ունենք 13-ամյա երեխայի կյանքի հետ և անչափահաս երեխաների հանդեպ սեռական ոտնձգությունները քրեորեն պատժվում է:

Վերլուծություն. Հոդվածը նախ փորձում է լրացուցիչ և անտեղի ուշադրություն գրավել նշելով՝ «**ArmLur.am-ի ուշագրավ տեղեկություններով՝** վերոնշյալ դեպքերը նույն ժամանակահատվածում չեն եղել, ըստ տեղեկությունների՝ առաջին անգամ աղջկան բռնաբարել է 72-ամյա տղամարդը, որոշ ժամանակ անց 70-ամյա տղամարդը»՝ գործից հայտնելով մանրամասներ, որոնք ստույգ չեն, և երկրորդ, լրագրական տեսանկյունից՝ անտեղի, քանի որ ընթացիկ գործի քննությանն առնչվող մանրամասներ են: Երկրորդ, «**13-ամյա աղջիկը այդքան էլ չի փայլել վարքով»** արտահայտությունը զոհի նկատմամբ մեղադրողական հիմք է տրամադրում, մյուս կողմից՝ մեղմացնելով բռնարարքն իրականացնողների մեղքը: Այլ կերպ ասած, նման արտահայտությունը ենթադրում է, որ զոհի վարքագիծը կարծես թե նպաստել է տղամարդկանց կողմից կատարված սեռական բռությանը: Սա զոհերին և տուժածներին մեղադրելու դասական, «դասագրքային, կանոնացված» ձևերի մեկն է, որը նախ բացարձակապես չի բխում զոհի շահերից, իսկ զոհն այս պարագայում երկորդ անգամ է զոհացվում: Ստացվում է, որ կանայք և աղջիկները միշտ «մեղավոր են» լինում իրենց հանդեպ կատարված բռնության համար. նպաստում, հրահրում, դրդում, նույնիսկ երբեմն ակնարկելով, որ նրանց գուցե դուր է գալիս, որն իր հերթին շեղում է բռնության ուղղությունը և բռնարարին ավելի մեղմացնող դիրքերում է պատկերում, եթե նույնիսկ այդ հոդվածում որևէ բան չի էլ նշվում հենց բռնարարի մասին, այլ կերպ ասած՝ նպաստում է բռնության, այս պարագայում՝ սեռական բռնության, արդարացմանը, մեղմացմանը՝ խեղաթյուրելով հանցագործությունը, նվազացնելով լրջությունը և խեղաթյուրված

[12] Աղբյուր՝ https://armlur.am/1360210/ [Մուտք՝ 10.09.2024]::

ներկայացնելով ուժերի դինամիկան: **«13-ամյա աղջիկը այդքան էլ չի փայլել վարքով»** ակնարկային արտահայտությունը նաև «հուշում է», որ աղջկա վարքագիծը լիովին համապատասխանում է հանցագործությանը, որն իր հերթին գենդերային վնասակար և վնասաբեր կարծրատիպերն ամրապնդելու հիմք է:

- Կնոջը սեռականացնող, ապրանքայնացնող և առարկայնացնող դիսկուրս

Գենդերային ապատեղեկատվության նման դիսկուրսները և դրանց համատեքստում օգտագործվող նարատիվները տարածված են ամբողջ աշխարհում: Ստորև ներկայացվող օրինակը դրանցից մեկն է, որը ևս դիտարկվել և գրանցվել է մշտադիտարկման արդյունքում.

Հատված. «Շուրջ երկու շաբաթ թափուր մնացած **Երևանի քաղաքապետարանի վերահսկողության վարչության պետի պաշտոնում օրերս ժամանակավոր պաշտոնակատար է նշանակվել երիտասարդ Աննա Գևորգյանը, որը քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղար Շավարշ Գրիգորյանի մտերիմն է և թերևս այդ առաքելության համար էլ նշանակվել է այդ պաշտոնում»:**

Վերլուծություն. Այս գենդերային ապատեղեկատվության օրինակը միտված է կնոջ կարողությունները նվազեցնելուն: Նախ, հատուկ շեշտվում է կնոջ երիտասարդ լինել, որ կինը պաշտոնին նշանակվել է, քանի որ նա քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարի մտերիմն է: Ընդ որում «մտերիմ» բառը կարող է տարբեր կերպ մեկնաբանվել, շահարկվել և շրջանառվել հասարակության շրջանում: Այստեղ առկա է նաև կնոջը սեռականացնող և առարկայնացնող դիսկուրս. նյութին կցված է Ա. Գևորգյանի, հավանաբար սոցցանցերից վերցրած անձնական և ոչ թե գործնական նպատակներով կատարված ինքնալուսանկարը:

Այս օրինակով փորձ է արվում առաջ քաշել այն թեզը, որ սույն անձը նշանակվել է ոչ թե իր որակավորման, այլ ֆավորիտիզմի, մտերիմ հարաբերությունների պատճառով: Այս ակնարկը նվազեցնու է նրա կարողությունները, ունակությունները՝ ուշադրությունը տեղափոխում-սևեռում ենթադրյալ անձնական կապի վրա, որը տարածված մարտավարություն է, որն օգտագործվում է պաշտոններում կանանց վարկաբեկելու և հնարավոր առաջխաղացումը կանխելու համար:

Գենդերային կարծրատիպերը ևս գործիք են հանդիսանում այս օրինակի համատեքստում. օգտագործելով «երիտասարդ» բառը՝ փորձ է արվում ընդգծել երիտասարդ կնոջ հնարավոր կապը տղամարդ գործընկերոջ հետ՝ փորձելով ընդգծել, որ երիտասարդ կանայք հզոր դիրքեր են ստանում ազդեցիկ տղամարդկանց հետ անձնական հարաբերությունների միջոցով, այլ ոչ թե արժանիքների: Հոդվածի հիմնական շեշտադրումն անձնական հարաբերությունների վրա է՝ առանց որևէ հիշատակման Ա. Գևորգյանի որակավորումների, փորձի կամ ձեռքբերումների վրա, իսկ այս միտումնավոր «բացթողումը» ամրապնդում է ապատեղեկատվությունը, քանի որ տպավորություն է ստեղծվում, որ նրա նշանակումը ֆավորիտիզմի արդյունք է:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի մեդիայում գենդերային ապատեղեկատվության վերաբերյալ իրականացված մշտադիտարկումը, ինչպես նաև ընտրված ժամանակահատվածում ընտրված մեդիաների և վերջիններիս բովանդակության վերլուծությունները ցույց են տալիս.

.

- Գենդերային ապատեղեկատվությունը կենտրոնացած է հիմնականում առցանց հարթակներում. այն փաստը, որ ապատեղեկատվության գրեթե բոլոր դեպքերը հայտնաբերվել են առցանց լրատվամիջոցներում, միայն մեկ դեպք հեռուստատեսությամբ, ընդգծում է առցանց հարթակների կողմից նման բովանդակություն տարածելու ավելի մեծ միտումը: Այս խիստ անհավասարակշռությունն ընդգծում է հանրային ընկալումների ձևավորման և գենդերային ապատեղեկատվության տարածման գործում առցանց լրատվամիջոցների դերի հետագա ուսումնասիրության անհրաժեշտությունը, ինչպես նաև դրանց հնարավոր ազդեցությունը քաղաքական դիսկուրսի վրա:

- Գենդերային ապատեղեկատվության առաջնային տարածողները լրագրողներն են, նրանց հետևում են քաղաքական գործիչները: Այս բաշխումը ընդգծում է լրատվամիջոցների ներկայացուցիչների և քաղաքական գործիչների զգալի ազդեցությունը գենդերային ապատեղեկատվության համատեքստում հանրային ընկալման ձևավորման գործում:

- Գենդերային ապատեղեկատվությունը տարածողների վերաբերյալ տվյալները մի քանի ուշագրավ օրինաչափություններ են բացահայտում հայաստանյան լրատվամիջոցներում. գրեթե հավասար թվով տղամարդ և կին քաղաքական գործիչներ (59 կին, 56 տղամարդ) պատասխանատու են գենդերային ապատեղեկատվության տարածման համար: Սա ցույց է տալիս, որ քաղաքական դիսկուրսի ներսում ապատեղեկատվությունը գենդերային երևույթ չէ, քանի որ քաղաքականության մեջ կանայք, չնայած հաճախ գենդերային հարձակումների հիմնական թիրախն են դառնում, նույնպես նպաստում են ապատեղեկատվության գեներացմանն ու տարածմանը:

- Առցանց հարթակներն ավելի հակված են գենդերային ապատեղեկատվության տարածմանը, ինչը հնարավոր է, արտացոլում է խմբագրական կողմնակալությունը կամ բովանդակության նվազ խիստ վերահսկողությունը:

- Հայասանի մեդիայում կիրառվող գենդերային ապատեղեկատվությունը հիմնականում միտված է, ուղղված հասարակական, քաղաքական և մասնագիտական ոլորտներում գործող, հատկապես՝ ակտիվ գործունեություն ծավալող, կանանց հեղինակազրկմանը, կարողությունները կասկածի տակ դնելուն, մասնագիտական կարողություններ նվազեցնելուն, արժանապատվությունը նսեմացնելուն:

- Դիտարկված և ուսումնասիրված օրինակները հավաքագրվել են, խմբավորվել մշտադիտարկման թիմի կողմից և դասակարգվել ըստ դիսկուրսների տեսակների և նարատիվների ենթատեսակների: Արդյունքում առաձնանցվել է վեց դիսկուրս, որոնցից յուրաքանչյուրն ունի իրեն հարող կոնկրետ նարատիվը կամ նարատիվները: Այդ դիսկուրսներն են՝

    - *Զոհին մեղադրող դիսկուրս*
    - *Քաղաքականություն և գենդերային ապատեղեկատվություն. քաղաքական մտաշահարկման նպատակով իրականացվող դիսկուրս*
    - *Փոխհատական դիսկուրսներ*
    - *Գենդերային հավասարության և հիմնահարցերի վերաբերյալ քաղաքականության և օրենսդրության մասին դիսկուրս*
    - *Կնոջը սեռականացնող, ապրանքայնացնող և առարկայնացնող դիսկուրս*
    - *Գենդերին, ազգային անվտանգության և պաշտպանության հարցերին վերաբերյալ դիսկուրս*

- Դիտարկված գենդերային ապատեղեկատվությունը դրսևորվում է մի քանի հիմնական ուղղություններով, մասնավորապես.
    - *Կանանց մասնագիտական կարողությունների նվազեցում և վարկաբեկում.* կանայք, մասնավորապես՝ առաջնորդի դերեր կամ ղեկավար պաշտոններ ունեցողները, հաճախ թիրախավորվում են այնպիսի նարատիվների միջոցով, որոնք կասկածի տակ են դնում նրանց մասնագիտական կարողությունները:
    - Կանանց գործողությունները, նախաձեռնությունները և որոշումները վերլուծելու կամ ներկայացնելու փոխարեն, ուշադրությունը շեղվում է և տեղափոխվում կանանց անձնական տիրույթ՝ շեշտը դնելով անձնական հատկանիշների վրա՝ օգտագործելով գենդերային ակնարկներ/ ենթատեքստեր, ինչպիսիք են կանանց արտաքին տեսքը կամ հարաբերությունները գործընկերների, մասնավորապես՝ տղամարդ գործընկերների հետ:
    - *Գենդերային բռնության համատեքստում զոհի/ տուժածի թիրախավորում և մեղադրում*: Մեդիան հաճախ նարատիվներ է ներկայացնում, որոնք հենց զոհին են ուղղակի կամ անուղղակի մեղադրում են սեռական բռնության համար՝ հաճախ ընդգծելով աղջիկների կամ կանանց «անպատշաճ և հրահրող» վարքագծի մասին: Այս նարատիվները խորացնում են թյուր և շեղված պատկերացումները սեռական բռնության մասին՝ ակնարկելով, որ զոհերը պատասխանատու են իրենց դեմ կատարված հանցագործությունների համար և ոչ ամենևին բռնարարները:
    - *Կանանց սեռականացում և օբյեկտիվացում.* Կանայք, մասնավորապես՝ նրանք, ովքեր ներգրավված են քաղաքական կամ հասարակական ոլորտներում, հաճախ ենթարկվում են սեռականացված նարատիվների, որտեղ նրանց մասնագիտական գործունեության վրա ստվեր է գցվում՝ կենտրոնանալով նրանց արտաքին տեսքի կամ անձնական կյանքի վրա: Այս մոտեցումը խոչընդոտում է կանանց առաջխաղացմանը, ներգրավվածությանը և մասնակցությանը:
    - Գենդերը, գենդերային կարծրատիպերը, գենդերային բնույթի անեկդոտներն ու պատումները որպես գործիք կիրառելը. կանայք, որոնք ակտիվորեն ներգրավված են քաղաքականության մեջ, հաճախ դառնում են գենդերային ապատեղեկատվության թիրախ: Նրանց սեռը օգտագործվում է նրանց գործողությունները, լիազորությունները կասկածի տակ դնելու, բուն թեմայինից/ խնդրից շեղելու կամ կանանց լռեցնելու նպատակով:

- *Անձնական և մասնագիտական սահմանների խախտում և շահերի ոտնահարում.* մեդիան հաճախ կնոջ անձնական կյանքը (հարաբերություններ, ընտանիք, երեխաները, ազգակցականներ) օգտագործում է նրա մասնագիտական հմուտությունը վարկաբեկելու համար:

- Գենդերային ապատեղեկատվության վերաբերյալ այս դիսկուրսները, ինչպես նաև դրանց նարատիվներն արտացոլում են հասարակական խորքային վերաբերմունքն ու մոտեցումները, որոնք ուղղված են կանանց վարկաբեկելուն, վնասելուն, նվազեցնելու նրանց դերն, դիրքը և հեղինակությունը: Այս ամենը կիրառվում է միտումնավոր և գիտակցաբար: Ընտրված մարտավարությունները ծառայում են որպես գործիք գենդերային ապատեղեկատվությունը տարածելու և հաստատելու հարցում:

- Գենդերային կարծրատիպերը մի կողմից հիմք են նախապատրաստում գենդերային ապատեղեկատվության տարածման և «լեգիտիմացման» համար, մյուս կողմից արդարացնում են այդ նույն ապատեղեկատվությունը: Դրանք ինքնին գենդերային ապատեղեկատվություն չեն հանդիսանում, սակայն մշտադիտարկման համատեքստում այն գենդերային կարծրատիպերը, որոնք գործիք են հանդիսանում կնոջը թիրախավորելու և վնասելու համար, դիտարկվել են որպես գենդերային ապատեղեկատվության մաս:

- Թիրախում հիմնականում ակտիվ գործունեություն ծավալող կանայք են՝ անկախ կուսակցական պատկանելիությունից կամ ոչ կուսակցական լինելուց, թեև նախկինում ակտիվ գործունեություն ունեցողները ևս ժամանակ առ ժամանակ հայտվում են թիրախում: Նպատակը նույնն է՝ լռեցնել, կանխել ակտիվությունը, արժեզրկել, «զսպել»:

- Թիրախում ամենաշատը հայտնվել են ՄԻՊ-ը, ՀՀ ԿԳՄՍ նախարարը, ՀՀ վարչապետի կինը:

- Գենդերային ապատեղեկատվությունը հիմնականում բովանդակության/տեքստի մակարդակում է, որը կարող է ուղեկցվել նկարներով: Կան վերնագրեր, որոնք ինքնին արդեն իսկ գենդերային ապատեղեկատվություն են:

- Օրինաչափությունների ցանկում է հետևյալը. եթե գենդերային ապատեղեկատվություն տարածողը կին է կնոջ հանդեպ, ապա վերջինս հիմնականում պատասխանում է իր հասցեին հնչեցրած ապատեղեկատվությանը, մինչդեռ եթե տարածողը տղամարդը է կնոջ նկատմամբ, կանայք սովորաբար չեն արձագանքում առհասարակ շրջանառող ապատեղեկատվությանը:

- Գենդերային ապատեղեկատվությունը ոչ միայն վնասում է թիրախավորված կանանց, այլ նաև խորացնում է հասարակության մեջ առկա կարծրատիպերը, որոնք նվազեցնում են կանանց դերը և խոչընդոտում գենդերային հավասարության հաստատմանը: Մեդիայի դերը որոշիչ է, քանի որ այն ձևավորում է հասարակական ընկալումները՝ միևնույն ժամանակ խոչընդոտելով կանանց մասնակցությանը քաղաքական, հասարակական և մասնագիտական ոլորտներում:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հաշվի առնելով, որ մշտադիտարկման վերլուծության արդյունքներն ու եզրակացությունը՝ փորձագիտական թիմը կատարում է հետևյալ առաջարկությունները.

Առաջարկություններ՝ օրենսդրական և քաղաքականությունների մշակման մակարդակում.

- Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին օրենքի փոփոխության և բարելավման համատեքտում գենդերային ապատեղեկատվության մասին դրույթների ամրագրում:

- Հակախտրականության մասին օրինագծի հաստատում՝ գենդերային ապատեղեկատվության, ինչպես նաև ատելության խոսքի վերաբերյալ համապարփակ դրույթների ամրագրմամբ:

- Գենդերային քաղաքականության իրականացման ռազմավարության (2024-2028) մեջ պլանավորված համապատասխան հանրային արշավների և իրազեկման գործընթացների համատեքստում գենդերային ապատեղեկատվության վերաբերյալ թեմաների ներառում:

- Գենդերային քաղաքականության իրականացման ռազմավարության նոր շրջափուլի մեջ (2028թ.-ից սկսած) պլանավորել և ներառել գենդերային ապատեղեկատվության վերաբերյալ իրազեկման և կրթական ծրագրեր՝ վերջինիս միջոցառումների պլանի մեջ հստակ նշելով գործողություններ, գործողությունների արդյունքներ, արդյունքային ցուցանիշներ, որպես

կատարող՝ պետական գերատեսչություններին, իսկ ՔՀԿ-ին՝ որպես համակատարող (համաձայնությամբ)։

Գործնական առաջարկություններ.

- Կանանց սատարելու միասնական հարթակի ստեղծում, որը բաղկացած կլինի փորձագիտական համայնքի ներկայացուցիչներից և ՔՀԿ ներկայացուցիչներից, որոնք արագորեն կարձագանքեն եղած դեպքերին, ինչպես նաև կանխարգելման նպատակով արշավներ կիրականացնեն, կներկայացնեն իրավիճակը և տվյալները գործող տարբեր պետական հանձնաժողովներում։

- Գենդերազգայուն և գենդեր-արձագանքող պատախաստանու լրագրության վերաբերյալ ուղեցույցի մշակում և գենդերային ապատեղեկատվության վերաբերյալ լրագրողական համայնքի ներկայացուցիչների համար դասընթացների անցկացում։

- ԿԶՆԱԿ-ի համակարգմամբ վերապատրաստող մենթոր ուսուցիչների համար գենդերային խտրականության և գենդերային ապատեղեկատվության վերաբերյալ մոդուլի մշակում և (առցանց) վերապատրաստման դասընթացների անցկացում՝ ընդգրկելով ՀՀ ողջ տարածքը։

- Հասարակագիտություն առարկային համապատասխան թեմաների գենդերային հավասարություն, կարծրատիպեր և խտրականություն բաժնի համատեքստում գենդերային ապատեղեկատվության վերաբերյալ հարցերի ընդգրկում և ներկայացում։

- Քաղաքական ընտրությունների ժամանակ մեդիա մշտադիտարկման խմբի ստեղծում, որը կարձանագրի իրավիճակը և համապատասխան կներկայացնի իրավիճակը հանրությանը՝ հստակ ուղերձներ փոխանցելով։

- Փորձագիտական համայքնի և ՔՀԿ-ների համատեղ ջանքերի միջոցով մշտադիտարկման արդյուքների փաթեթի մշակում և ներկայացում, այդ թվում՝ ՀՀ ԱԺ մարդու իրավունքների հանձնաժողովին, և համապատասխանաբար օրենսդիր ներկայացուցիչների հետ բաց և փակ քննարկումների անցկացում։

- Կանանց նկատմամբ խտրականության վերացման հարցերով կոմիտեի 2026 թվականի ժողովին ընդառաջ ՔՀԿ-ների այլընտրանքային զեկույցում սույն

մշտադիտարկման զեկույցի տվյալների և առաջարկների ընդգրկում և ներկայացում:

- ՄԻՊ-ի գրասենյակի կողմից իրականացվող տարեկան իրազեկման աշխատանքներում և ելույթների շրջանակում համապարփակ անդրադարձ գենդերային ապատեղեկատվությանն ու գենդերի հիքմով ատելության խոսքին:

- Մարզպետի աշխատակազմին կից գործող գենդերային հանձնաժողովների օրակարգում գենդերային ապատեղեկատվության վերաբերյալ հարցերի քննում և մարզային/ համայնքային մակարդակով հանրային իրազեկման արշավների կազմակերպում և անցկացում:

- Լրատվամիջոցների էթիկական կանոնագրերում դրույթների ներառում, որոնք կմերժեն գենդերային, անձնական կամ ընտանեկան տեղեկատվության օգտագործումը որպես գործիքներ:

- ԶԼՄ-ների համար ուղեցույցների մշակում, որոնք կկանխեն գենդերային բովանդակության շահարկումը և կապահովեն կին քաղաքական և հասարակական գործիչների հավասարակշռված, արժանապատիվ լուսաբանումը, կնպաստեն, որ լուսաբանումը կենտրոնանա քաղաքական գործչի մասնագիտական աշխատանքի վրա, այլ ոչ թե նրանց անձնական կյանքի կամ սեռի ու գենդերի վրա:

- Ինքնակարգավորման մեխանիզմներին աջակցություն և լրատվամիջոցների վարքագծի ներքին կանոնների ընդունում՝ կապված գենդերային ներկայացվածության և ապատեղեկատվության հետ, որը կարող է հանգեցնել լրագրողների ավելի պատասխանատու վարքագծին:

- Առցանց լրատվամիջոցների կարգավորում: Հաշվի առնելով, որ գենդերային ապատեղեկատվության ճնշող մեծամասնությունը հայտնաբերվել է առցանց հարթակներում, անհրաժեշտ է մշակել առցանց լրատվամիջոցների կանոնակարգեր:

- Լրացուցիչ հետազոտությունների իրականացում՝ գենդերային ապատեղեկատվության տարածման հիմքում ընկած քաղաքական դրդապատճառների վերաբերյալ, մասնավորապես, այն լրատվամիջոցներում, որոնք առավել հաճախ թիրախավորում են իշխանության ներկայացուցիչներին (Ա խումբ) կամ ընդդիմության ներկայացուցիչներին (Բ խումբ):

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

- Bal, M. (1997). *Narratology. Introduction to the Theory of Narrative.* University of Toronto Press.

- DEMOS (2022). *Submission on Opportunities, Challenges and Threats to Media in the Digital Age: Gendered Disinformation*. Available at https://www.ohchr.org/sites/default/files/documents/issues/expression/cfis/threats-digital-age/csos/2023-01-26/Submission-SR%20freedex-hrc50-Demos.pdf [Access: 10.09.2024].

- EU Disinfo Lab (2024). *Gender-Based Disinformation: Theory, Examples, and Need for Regulation.* Available at https://www.disinfo.eu/publications/monitoring-disinformation-around-elections-key-takeaways-from-the-german-federal-elections-in-2021-2/ [Access: 10.09.2024].

- Fisher, W.R. (1984). *Narration as a Human Communication Paradigm. The Case of Public Moral Argument.* Communication Monographs, 51(1), 1-22. DOI: [10.1080/03637758409390180].

- Fairclough, N. (1995). *Critical Discourse Analysis. The Critical Study of Language*. Longman.

- HM Government (2024). *Gender and Counting Disinformation:* Quick-Read Guide. Available at https://assets.publishing.service.gov.uk/media/5e4ab31e40f0b677c3e37ff3/Quick_Read-Gender_and_countering_disinformation.pdf [Access: 10.09.2024].

- Kovacs, A. (2021). *Gendered Disinformation: 4 Ways Misinformation and Falsehoods Target Women Online*. Available at https://chayn.co/resources/gendered-disinformation [Access: 05.09.2024].

- NDI (2021). *Addressing Online Misogyny and Gendered Disinformation:* A How-To Guide Available at https://www.ndi.org/publications/addressing-online-misogyny-and-gendered-disinformation-how-guide [Access: 10.09.2024].

- Pennycook, G., & Rand, D. G. (2021). *Fighting Misinformation on Social Media Using Crowdsourced Judgments of News Source Quality*. PNAS, 118(19). Available at https://www.pnas.org/doi/10.1073/pnas.2024514118 [Accessed 05.09.2024].

- Sessa, M. G. (2022). *What is Gendered Disinformation?* Heinrich Boll Stiftung. Available at https://il.boell.org/en/2022/01/26/what-gendered-disinformation [Access: 10.09.2024].

- UN Women (2022). *Gendered Disinformation: Misinformation and Harassment Targeting Women in Politics.* Available at https://www.unwomen.org/en/news/stories/2022/03/news-gendered-disinformation-in-politics [Access 05.09.2024].

- UN Women (2020). *Online Threats to Women´s Political Participation and the Need for a Multi-Stakeholder. Cohesive Approach to Address Them.* Available at https://www.unwomen.org/sites/default/files/Headquarters/Attachments/Sections/CSW/65/EGM/Di%20Meco_Online%20Threats_EP8_EGMCSW65.pdf [Access: 10.09.2024].

- US Department of State (2023). *Gendered Disinformation: Tactics, Themes, and Trends by Foreign Malign Actors.* Available at https://www.state.gov/gendered-disinformation-tactics-themes-and-trends-by-foreign-malign-actors/ [Access: 10.09.2024].

- Wardle, C., & Derakhshan, H. (2017). *Information Disorder: Toward an Interdisciplinary Framework for Research and Policymaking*. Council of Europe. Available at https://rm.coe.int/information-disorder-toward-an-interdisciplinary-framework-for-researc/168076277c [Access 05.09.2024].